№ 109 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 15 — 1900 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 15 № 109

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

## ԲԱՑՎԱԾ Է ԿԷՍ ՏԱՐՎԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# ՄՇԱԿ

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

*«Մշակի» վեց ամսվայ գինն է, յուլիսի 1-ից մինչեւ տարվայ վերջը, Վեց ռուբլի. մէկ ամսվանը—մէկ ռուբլի։ Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն կէս տարվայ համար 3 դոլար, Եւրոպայի բաժանորդները—16 ֆրանկ։*

*Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով.* ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», *իսկ արտասահմանից՝* TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

*Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։*

*ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ*

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*Ինչու՞ չը մշակվեց.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Երեւանից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Անպատրաստ ժողովուրդ.*

### ԻՆՉՈՒ ՉԸ ՄՇԱԿՎԵՆ

Մենք յայտնել էինք, որ Երեւանի եւ Նուշու թեմական դպրոցների համար նշանակված են հոգաբարձական ընտրութիւններ։ Արդէն տեղի ունեն ծխական ժողովներ՝ պատգամաւորներ ընտրելու համար, որոնք իրանց կողմից պէտք է ընտրեն ապագայ հոգաբարձութեան անդամներին։

Թէեւ ընտրողական գործը նորութիւն չէ մեզանում, սակայն նա մինչեւ այժմ կանոնաւորված եւ բարեկարգված չէ։ Ընտրութիւններ կատարելու համար մինչեւ այժմ չէ ընդունված մի որոշ եւ ընդհանուր եղանակ, որով ղեկավարվէին ընտրողական ժողովները։ Ամենայն տեղ ունի իր կանոնները եւ կարգերը։ Այն, ինչ թոյլատրվում է դիցուք Երեւանում՝ նա արգելվում է Շուշիում եւ ընդհակառակն։

Շատ անգամ ընտրութիւնների ժամանակ ծագում են թիւրիմացութիւններ, որոնց գլխաւոր պատճառը անորոշութիւնն է եւ յայտնի կանոնների բացակայութիւնը։ Ծխականներից մի քանիսը զրկվում են ընտրողական ձայնից այն ժամանակ, երբ նրանց դրացիները նոյնատեսակ հանգամանքներում վայելում են լիակատար իրաւունքներ եւ մասնակցում են ժողովներին։ Նոյն-իսկ ընտրութիւնների միջոցին յաճախ ծագում են վէճեր, որոնց վերաբերութեամբ նախագահներն անգամ չը գիտեն ինչ դիրք բռնել եւ ինչպէս նրանց լուծել։

Թիֆլիսի թեմի ընտրութիւնների համար մի քանի տարի սրանից առաջ մշակված էին կանոններ, որոնք առաջարկված էին բարձր հոգեւոր իշխանութեան քննութեան եւ հաստատութեան։ Որքան մեզ յայտնի է, այդ կանոնները մինչեւ այժմ հաստատութիւն չեն ստացել։

Ցաւալի է, որ էջմիածնում անհոգութեամբ վերաբերվեցին ընդհանուր կանոններ հաստատելու խնդրին եւ չըսահմանեցին մի այնպիսի կարգ, որ որոշութիւն մտցնելով ընտրողական գործերի մէջ, առաջն առներ զանազան թիւրիմացութիւնների եւ տար ծխական իրաւունքների գործադրութեան մի բարեկարգ ձեւ։ Մեր ընտրութիւնների ժամանակ տեղի ունեցող անախորժութիւնների գլխաւոր պատճառներից մէկը եղել է ընտրողական որոշ կարգերի բացակայութիւնը։ Ի՞նչ դժուարութիւն կար այդ փոքրիկ բայց անհրաժեշտ գործը կանոնաւորելու։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՄԱՄՈՒԼ

Շուտով Կովկասը կը տօնէ Ռուսաստանի իշխանութեան տակ անցնելու հարիւրամեակը, բայց այսքան երկար չրջանում Կովկասեան ցաւերից մէկը եւ ամենահինը դեռ չէ վերացված։ Մենք խօսում ենք ընդհանուրին յայտնի, վաղուց անբնական կերպարանք ստացած մի ցաւի—թարգմանների մասին։ Բաւական է, օրինակ, մի անգամ ներկայ լինել նահանգական մի դատարանում, ուր քննվում է, դիցուք, մի քրէական գործ եւ ուր արդարադատութեան սեղանի առաջ կանգնածները—մեղադրվողներ, վկաներ—չը գիտեն ռուսերէն լեզուն եւ խօսում են դատաւորների հետ թարգմանի միջոցով։ Այս վերջինը, որ այդքան ահագին դեր է կատարում գործի քննութեան մէջ, հանդիսանալով ցուցմունքներ տուողների, եթէ կարելի է ասել, լեզուն՝ սովորաբար մի ստորին ծառայող է, ողորմելի զարգացման տէր, ռուսաց լեզուին հարեւանցօրէն միայն ծանօթ, 30—40 ռուբլի ստացող մի գրագիր։ Դուք տեսնում էք, թէ ինչպէս նա աղճատում է իր թարգմանութեան մէջ խօսողների ցուցմունքները, ինչպէս կրճատում է մանրամասն բացատրութիւնները, ինչպէս շատ անգամ ամբողջ էջ հատարում նոյն-իսկ բացատրել դատաւորների ասածները նրանց լեզուն չը հասկացողներին։ Հասկանալի է, թէ որքան սխալ վճիռներ են կայանում անգրագէտ եւ անբարեխիղճ, հեշտ կաշառվող թարգմանների չնորհիւ։ Ի նկատի առնելով այն դիրքը, որ գրաւում է թարգմանը դատարանի եւ գործ ունեցողների մէջ, կարելի է ասել, թէ գործը վճռող հանդիսանում է այդ թարգմանը, քանի որ նրա ձեռքումն է այս կամ այն ուղղութիւնը տալ գործին։ Այս դեռ դատարաններում, ուր գոնէ պատասխանատու, մշտապէս ծառայող թարգմաններ կան։ Երեւակայեցէք ռուս բժշկին, ակցիզի պաշտօնեային, հողաչափին մի այնպիսի գիւղում, ուր ռուսերէն հասկացողներ չը կան. այդ դէպքերում թարգմանի պաշտօն կատարողները նրանք են, որոնք մի քանի բառ սովորել են ռուսերէն, օրինակ, հէնց նոյն պաշտօնեաների ծառաները կամ ուղեցոյց ձիաւորը։ Ի՞նչ կարող են հասկանալ թէ՛ պաշտօնեաները եւ թէ ժողովուրդը այդպիսի տգէտ միջնորդների օգնութեամբ։ Այս է պատճառը, որ թարգմանների հարցը վաղուց, շատ վաղուց գրաւել է Կովկասը ժամանակուց ճանաչողների եւ մանաւանդ տեղական մամուլի առանձին ուշադրութիւնը։ Զարիքը վերացնելու համար առաջարկվել են շատ ծրագիրներ, բայց մինչեւ այժմ դրութիւնը չէ փոխվել։ Նոյն հարցին մի ընդարձակ յօդուած է նուիրված «С. Петерб. Вѣд.» լրագրի մէջ։ Շատ ճիշդ կերպով նկարագրելով այն բոլոր վնասները, որ հասցնում են կովկասեան ազգերին թարգմանները՝ յօդուածագիրը քննում է եւ այն միջոցները, որոնք առաջարկվում են այդ չարիքի դէմ եւ գտնում է, որ այդ միջոցները չեն կարող իրական նշանակութիւն ունենալ։ Իր կողմից յօդուածագիրը առաջարկում է բաժանել պետական հիմնարկութիւնները երկու կարգի. առաջին կարգին են պատկանում կենտրոնական, նահանգական եւ գաւառական այն դիւանները, որոնք տեղական ազգաբնակութեան հետ համեմատաբար քիչ են շփվում. իսկ երկրորդ կարգում են այն պաշտօնեաները, որոնք անմիջապէս գործում են ժողովրդի մէջ, անմիջապէս շփվում են նրա հետ։

Առաջին կարգի հիմնարկութիւնների մէջ—այստեղ կը լինեն դատաստանական պալատը, նահանգական դատարանները, նահանգական վարչութիւնները, ակցիզային վարչութիւնները, պետական կալուածների վարչութիւնները, արքունական պալատները, պրոկուրօրները, նրանց օգնականները—պէտք է լինեն թարգմաններ։ Իսկ երկրորդ կարգի հիմնարկութիւնների եւ պաշտօնատար անձանց համար թարգմանները չարիք են, որը անհրաժեշտ է ոչնչացնել, եւ որքան շուտ՝ այնքան լաւ։ Երկրորդ կարգին պատկանում են հաշտարար դատաւորները, քննիչները, գաւառապետները, վիճակաւոր պրիստաւները, հարկային տեսուչները եւ այլն։

Բայց ինչ պէտք է անեն այս կարգի պաշտօնեաները։ Այս հարցին յօդուածագիրը տալիս է մի պատասխան, որ վաղուց հասարվել է միակ արդարը եւ ճիշդը, այն է, որ այդ պաշտօնեաները իրանք պէտք սովորեն տեղական լեզուներից գոնէ մէկը, որպէս զի կարողանան անմիջապէս, առանց ուրիշի օգնութեան, խօսել ժողովրդի հետ։ Իսկ դրա համար, եթէ անկարելի է համարվում տեղացիներին տեղական պաշտօններ յանձնելը՝ կարելի է մի քանի միջոցներ առաջարկել։ Այսպէս, լաւ, պարտաճանաչ թարգմաններ պատրաստելու համար կարելի էր հիմնել մի յատուկ դպրոց, ուր բաւարարութիւն տալու համար, սակայն առանց անհրաժեշտ պայմանները ի նկատի առնելու։ Բաւական է, որ գաւառապետը հրամայէ հասարակութեան տանուտէրին գործադրել այս ինչ օրէնքը, եւ նա մտրակի զօրութեամբ անմիջապէս կը գործադրէ օրէնքը, թղթերը կը գրվեն մատեանի մէջ, պաշտօնական ձեւը կը լրանայ եւ ամէն բան կատարեալ կը դառնայ։ Բայց իսկապէս այդ իրարանցումից, տուր ու դմբոցից, նոր ծախսի դռներ բաց անելուց յետոյ ինչ օգուտ ունեցաւ ժողովուրդը.—ոչինչ։

Կրկնում ենք, ժողովրդի հասկացողութիւնը առողջապահութեան մասին տարօրինակ է. մեր գիւղացին մեծ աշխոյժով ձմեռը երկու շաբաթը մի անգամ տաք ջրով լուանում եւ ձիթում է իր լծկան եւ կթան գոմէշները, օրը մի քանի անգամ տակերը մաքրում է. ուտացնում է բամբակի հունդ, ձիթապտղի մնացորդ անասունները պարարտ եւ առողջ պահելու համար, իսկ ինքը գիւղացին ամբողջ ձմեռը մի կամ երկու անգամ հազիւ թէ տաք ջրով լուացվի գոմի սալերի վրա։ Հաղուագիւտ երեւոյթ է մեր գիւղերում բաղնիք ունենալը. շատերը շապիկները այնքան ուշ-ուշ են փոխում կամ լուանում, որ հագներին կեղտից փտելով մաշվում են. շատ գիւղերում միս ուտելը պատահական երեւոյթ է։

Հազարից մի գիւղացի արտաքնոց ունի, արտաթորումները թափվում են ամէն տեղ,—կտուրների վրա, բաղերում, դռան շեմքին, փողոցներում եւ այլն։ Երբ ամբողջ գիւղը լցված է միաղմներ առաջացնող նիւթերով եւ գարշահոտութեամբ, ինչ նշանակութիւն ունի գերեզմանները հազար քայլով հեռացնելը։

Նայեցէք գիւղացու բնակարաններին, հաշուեցէք ծախսը եւ տեսէք, թէ որքան հակառողջական, անյարմար եւ անմիտ չինութիւններ են դրանք։ Չէ՞ որ մարդի առողջապահական ամենաառաջին պայմաններն են՝ կանոնաւոր բնակարան, լաւ սնունդ ունենալը եւ մաքրութիւն պահպանելը։

Այդ բոլորը կատարելու համար բաւական չեն հրամանագրութեան թղթերը եւ մտրակը. պէտք է հաստատել կրթիչ հիմնարկութիւններ, պէտք է դաստիարակել ժողովուրդը մատչելի ձրի դասախօսութիւններով, եկեղեցու բեմից քարոզներով, բրոշիւրներ տարածելով, դպրոցում խօսելով։ Սանիտարական վարչութիւնն էլ պէտք է մեծ արիութեամբ սիստեմաբար քայլ առ քայլ հետեւէ ժողովրդի առողջապահական պահանջները անթերի կատարելու համար եւ ոչ թէ իրարանցման մէջ ընկնէ միայն այն ժամանակ, երբ ժանտախտ յայտնվի մեր դրացի պարսից սահմանում։

Նոր ձեռնարկութիւնը պէտք է տարբերվի հնից նոր եւ օգտաւէտ կատարելագործութիւններով։ Բաւական է նայել մեր ոչ միայն գիւղերի այլ եւ շատ քաղաքների գերեզմանատեղերին, ուր թաղված դիակները եւ նրանց վրա դրած քարերը շատ նման են պատերազմի դաշտում ընկած դիակների, որոնց ոտնահարելով անցնելը շատ անախորժ տպաւորութիւն է թողնում։ Այժմ նոր գերեզմանատեղերն էլ նոյն կերպ են կազմվում։ Լաւ կը լինի նոր

կաւանդվէին Կովկասի տեղական ամենագլխաւոր լեզուները—վրացերէն, հայերէն եւ թուրքերէն. իսկ այն պաշտօնեաները, որոնք անպատճառ պիտի իմանան տեղական լեզուներից մէկն ու մէկը՝ կարող էին պատրաստվել Կովկասեան գիմնազիաները աւարտող ռուսներից, եթէ այդ գիմնազիաներում պարտադիր լինէր մի որ եւ է տեղական լեզուի (նայած թէ ուր է գտնվում գիմնազիան) ուսումը։—Զենք կարող մեր կողմից չասել, որ տարիների ընթացքում մեզ էլ հարցի միակ արդարացի եւ ճըշմարիտ լուծումը եղել է այն, որ տեղական ժողովրդի մէջ գործող պաշտօնեաները իմանան տեղական լեզուն։ Մեզ համար իդէալական դատարանը այն կը լինէր, ուր դատաւորը անմիջապէս հասկանում է իր առջեւ կանգնածին եւ ուր տեղացին կարող է մտնել, համոզված լինելով, որ օրէնքի ներկայացուցիչը իրան պիտի լսէ, առանց անբարեխիղճ, վարձկան թարգմանի միջնորդութեան։ Օրէնքը, արդարադատութիւնը միայն այդ դէպքում կարող է հեղինակութիւն, կատարեալ վստահութիւն վաստակել մեր երկրի ազգաբնակութեան մէջ, որ կազմված է մեծ մասամբ նահապետական հասկացողութիւնների եւ կուլտուրայի ներկայացուցիչներից։ Մենք էլ ռուս լրագրի աշխատակցի պէս համոզված ենք, որ այդ դրութեան հետ կարելի է հաշտել։ Բայց մանաւանդ համոզված ենք, որ շատ անհրաժեշտ է վերջապէս ազատել կովկասեան ազգաբնակութիւնը այն ահագին չարիքից, որ ներկայացնում են այժմեան տգէտ ու հեշտ վաճառվող թարգմանները։ Սրանց թագաւորութեան մէջ օրէնքը, արդարադատութիւնը յաճախ ակամայ սխալների մէջ են ընկնում, եւ խեղճը, չունեւորը համարեա միշտ զրկված է մնում։ Ամեն դէպքում, երբ հասարակ, անգրագէտ մարդը պահանջ ունի. դիմելու իշխանաւորին՝ նա նախ եւ առաջ իր քայլերը ուղղում է դէպի թարգմանը, նրա մէջ է տեսնում իր յոյսն ու փրկութիւնը։ Ինչու պիտի այս մութ անձնաւորութիւնները այդքան առաջնակարգ, այդքան կարեւոր դեր կատարեն ժողովրդի մէջ։

## ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Յունիսի 11-ին

«Հարկ զօրէնս լուծանէ»—այս սկզբունքով ընտրութիւն կատարեց Երեւանի ժողովուրդն այսօր։ Ո՞րն էր այդ հարկը, որին օրէնքը տեղի տուեց։ Հոգաբարձական ընտրութիւն նշանակելում Էջմիածինն այնքան դանդաղ շարժվեց, որ յունիսի 7-ին միայն ստացվեց կոնդակը եւ անմիջապէս նշանակվեց ընտրութիւն։ Եւ որովհետեւ քաղաքն արդէն դատարկվելու վրա էր եւ ժողովուրդը ցրվում էր, իսկ միւս կողմից պէտք էր դպրոցի խումբը կազմելու օր առաջ հոգս տանել՝ ուստի կարգադրված էր յունիսի 11-ին անպայման կայացնել բոլոր եկեղեցիներում պատգամաւորական ընտրութիւններ, իսկ յաջորդ կիրակի, յունիսի 18-ին, հոգաբարձական ընտրութիւն։ Այսպիսով մեր ժողովուրդն ստիպված էր ակամայ յարմարվել Էջմիածնի ստեղծած նեղ դրութեան հետ։ Եւ այսօր քաղաքի վեց եկեղեցիներում միաժամանակ կատարվեցին պատգամաւորական ընտրութիւններ, թէպէտ շատերում պահանջված թիւը նոյն-իսկ չը լրացված, իսկ Նորք քաղաքամասի եկեղեցում նոյն-իսկ բաց քուէով, ինչպէս ասում են, բառագալի, որպէս ընդունված է գիւղերում։

Ընտրված են ընդամենը 60 պատգամաւորներ։ Եթէ ի նկատի առնենք, որ 30 տարեկանից փոքր չը պէտք է լինէին ընտրվողները, այն հաշածանքները, որ մի-երկու եկեղեցիներում աղաները եւ կամ նրանց կողմնակիցները փորձում էին հանել երիտասարդների դէմ եւ սառը վերաբերմունքը երիտասարդների կողմից, պէտք է ասենք որ ընտրութիւններն աջող են, թէպէտեւ մի քանի աղաներ դարձեալ ընտրվեցին։ Պատգամաւորների մեծ մասը երիտասարդ մարդկանցից է, որոնք եկող կիրակի թեմական դպրոցի դահլիճում ընտրելու են հոգաբարձութիւն։ Սակայն նախ քան ընտրութիւնը՝ մեր պատգամաւորների վրա դրված է երկու պարտաւորութիւն, որոնց կատարելուց յետոյ միայն բարոյական իրաւունք կունենան նրանք հոգաբարձական ընտրութեան մասնակցելու։ Նախ, ինչպէս արդէն հաղորդել ենք, նոր կոնդակով սրանից յետոյ հոգաբարձուների թիւում աւելանում են երկու քահանաներ, մի հանգամանք, որով սահմանափակվում է մեր ժողովրդի ազատ ընտրողական իրաւունքը, եւ երկրորդ՝ ամենքին յայտնի է Էջմիածնի անտեղի միջամտութիւնը դպրոցական գործերի մէջ, ինչպէս նա առանց հոգաբարձական ցանկութեան, վերջին տարիներս վերցնում եւ առաջարկում էր այս կամ այն վեղարաւորին տեսուչ, այն էլ լիաղօր իրաւունքներով։ Ահա այս երկու կարեւոր խնդիրները լուծելուց յետոյ միայն պատգամաւորները հանդիստ խղճով կարող են ձեռնարկել հոգաբարձական ընտրութեանը։ Գոնէ այսպէս է այսօր Երեւանի հասարակական կարծիքը եւ սպասելիքը ներկայ պատգամաւորներից։

Ուրեմն ինչ է մնում անել պատգամաւորներին։—Մի նախապատրաստական ժողովում դնել այս երկու հարցը. կազմել մի խնդրագիր եւ բոլորի ստորագրութեամբ, մի պատգամաւորութեան ձեռքով, ուղարկել Կաթողիկոսին եւ խնդրել նոր կարգադրութիւն, յանուն ժողովրդական ձայնի վերականգման եւ հոգաբարձութեան ազատ գործունէութեան, հեռու պահել անտեղի եւ վնասակար միջամտութիւնները։

Անցնելով հոգաբարձական ընտրութեան, կարծում ենք, որ ներկայ պատգամաւորները ընտրութիւնների մէջ դառն սխալներից ազատ մնալու համար՝ պարտաւոր են քննութեան առնել այժմեան հոգաբարձութեան գործունէութիւնը եւ այն դառն եւ ցաւալի բոպէները, որոնց մէջ հարստահարվել է թեմական դպրոցը ներկայ հոգաբարձութեան օրով։ Սրանից խայտառակ դրութեան մէջ, սրանից ծանր եւ հոգեմաշ օրերի երբէք ենթակայ չէ եղել թեմական դպրոցն իր գոյութեան ամբողջ ընթացքում, այս կը խոստովանեն նոյն-իսկ իրանք ներկայ հոգաբարձուները։ Սակայն ով է եղել այս բոլորի պատճառը։ Ի հարկէ, ներկայ հոգաբարձութիւնը, որը չը կարողանալով իր կոչման ծառայել, գոնէ այնքան պատուախնդիր չը գտնվեց, որ միւս երեք հոգաբարձուներին—Կ. Կամսարականին, բժիշկ Յովհաննէսեանին եւ Տ. Տէր-Յակոբեանին հետեւելով, հրաժարուէր՝ երբ անընդունակ գտնվեց Էջմիածնի անտեղի միջամտութեան դէմ գնալու դպրոցի տեսչական հարցում։ Շատ երկար կը լինէր մի առ մի կանգ առնել ներկայ հոգաբարձութեան պաշտօնավարութեան վրա, եւ որովհետեւ այդ չրջանը, այդ տխուր տարիները մեր դպրոցական կեանքում կարելի է անկման չրջան անուանել եւ այդ անկման չրջանի հետ անմիջապէս եւ անխզելի կերպով կապված է ներկայ հոգաբարձութեան անունը, ուստի ինքն ըստ ինքեան հարց է ծագում, թէ կարելի է վերընտրել հոգաբարձուներից մէկն ու մէկին, կամ ամենքին։ Այս հարցը դնելուց առաջ կրկին ցանկալի էր, որ կշռէին թէ ինչ արեց ներկայ հոգաբարձութիւնը։ Այսպէս անհրաժեշտ է մտածել մանաւանդ այն պատգամաւորներին, որոնք երիտասարդ լինելով հանդերձ, չեն քաշվում ոսկէ հորթին խնկարկելուց։

Ա.—Դօ

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Սղնախ, յունիսի 9-ին

1897 թուին մենք մի քանի անգամ առիթ ենք ունեցել գրելու Սուրբամից Սուրամի երէցփոխ Ստեփան Գրձելեանի եռանդուն գործունէութեան մասին, որը տարեկան եկեղեցական եկամուտը հասցրեց 1300 ր.։ Սակայն որովհետեւ Գրձելեան զրկեց քահանաներին ապօրէն կերպով տիրապետած եկեղեցական եկամուտներից, ուստի վերջինները իրանց ազգականների օգնութեամբ վրէժ լուծեցին նրանից՝ տապալելով նրան եւ ընտրելով նրա տեղ իրանց ազգական Ա. Յակոբեանին։

Երեք տարի է, ինչ քահանաների ընտրած երէցփոխը վարում է պաշտօն, եւ եկեղեցական եկամուտները զգալի կերպով պակասեցին. ներկայ երէցփոխի ցոյց տուած տարեկան եկեղեցական հասոյթը չէ հաւասարվում նախկին երէցփոխի ցոյց տուած գումարի նոյն-իսկ կէսին. բացի սրանից, նա հրապարակական հաշում ցոյց է տուել 200 ր. սուտ ծախս։ Ակներեւ է, որ ներկայ երէցփոխն իր անշնորհքութեան պատճառով պէտք է հեռացվէր տապարէզից, սակայն նրա ժոտիկ ազգական Սուրբամի գործակալ Յովսէփ քահանայ Առիւծեանը ամեն ջանք գործ դրեց դարձեալ նրան ընտրելու, կազմելով կուսակցութիւն իր ազգականներից եւ խանութէ խանութ ստորագրութիւններ հաւաքելով։ Որովհետեւ եկեղեցական չահերը թանկ են քան գործակալ Առիւծեանի չահերը՝ ուստի այս հարցի վրա դարձնում ենք Թիֆլիսի կոնսիստորիայի ամենայուրջ ուշադրութիւնը, սպասելով, որ Առիւծեանի ընտրած երէցփոխը չը հաստատվի պաշտօնում։ Սրան աւելացնենք եւ այն, որ Ա. Յակոբեան եկեղեցական կալուածին կից ունի սեփական կալուածք, իսկ այդպիսի անձ, համաձայն կանոնների, իրաւունք չունի երէցփոխ լինելու։

Յ. Գրիգորեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ Կովկասեան գիւղատնտեսական Ընկերութեան մէջ գործող մի յատուկ յանձնաժողով, որ մշակում էր վիճակագրական բիւրօ հիմնելու ծրագիրը՝ վերջացրեց իր աշխատանքները եւ յանձնեց Ընկերութեան խորհրդին իր զեկուցումը։ Խորհուրդը, այդ զեկուցման հիման վրա, որոշեց հրաւիրել մի անձ, որ յանձն առնէ ստատիստիկի պաշտօն։ Ռոճիկ նշանակված է տարեկան 1200 ռուբլի։ Ցանկացողները կարող են դիմել Ընկերութեան խորհրդին կամ յանձնաժողովի նախագահ Գլասէկին։ Ստատիստիկը պէտք է գործէ յանձնաժողովի ցուցումների համաձայն։ Ցանձնաժողովի նիստերը պէտք է լինեն պարբերաբար, իւրաքանչիւր երեքշաբթի օր։ Վիճակագրական ուսումնասիրութիւնները պէտք է սկսվեն Թիֆլիսի նահանգից եւ հանգամանքների ներելուն չափ տարածվեն Անդրկովկասի միւս նահանգներում։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի օգնական Ն. Ա. Զվերէվ երկուշաբթի, յունիսի 12-ին, Պետերբուրգից եկաւ Թիֆլիս։ Երեքշաբթի, յունիսի 13-ին, Զվերէվ այցելեց Թիֆլիսի արական 1-ին գիմնազիան։ Մինիստրի օգնականը այստեղից մի քանի օրից յետոյ կերթայ Աբասթուման։

—

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ վճռված է գիւղատնտեսութեան դասատուութիւնը մտցնել ուսուցչական սեմինարիաներում եւ հոգեւոր վարչութեան հանրակրթական դպրոցներում։

—

Պարսից կառավարութիւնը, ինչպէս հաղորդում է «Пет. Вѣд.» լրագիրը, արգելց ներկերի ներմուծութիւնը Ռուսաստանից Պարսկաստան։

—

«Кавказъ» լրագրին հաղորդում են, որ Էջմիածնի Սինոդի պրոկուրոր Կանչելիին տրված է արձակուրդ արտասահման գնալու համար։

—

«Русск. Вѣд.» լրագրում կարդում ենք. «Ֆինլանդական լրագիրները որպէս լուր հաղորդում են, թէ վճռված է ռուսաց լեզուն մտցնել ֆինլանդական սենատի տնտեսական դէպարտամէնտի եւ տեղական գլխաւոր վարչութիւնների գործավարութեան մէջ։ Հոկտեմբերի 1-ից բոլոր առաջադրութիւնները Բարձրագոյն անունով սենատի տնտեսական դէպարտամէնտից կը գրվեն ռուսերէն լեզուով. մինչեւ այժմ այդպիսի առաջադրութիւնները գրվում էին շվեդական լեզուով՝ կցելով դրան ռուսերէն թարգմանութիւնը։ 1903 թուից գլխաւոր վարչութիւններից սենատ ուղարկվող բոլոր թղթերը կը գրվեն ռուսերէն լեզուով, իսկ 1905 թուից ռուսաց լեզուն պաշտօնական լեզու կը դառնայ սենատի տնտեսական դէպարտամէնտի համար։ Սատատս-սեկրետարիատի գործավարութեան մէջ ռուսաց լեզուն մտցնվում է անյապաղ։»

---

գերեզմանատեղերը հէնց սկզբից կանոնաւոր ածուներով չինվեն, թէ չրջապատը եւ թէ ածուների երկու կողմերում ծառեր տնկվեն. դա կը տար առողջապահական եւ տնտեսական գործնական օգուտներ։

Արարատեան լայնատարած դաշտում հողը այնքան սակաւացել է, որ երբեմն մի արշին տեղի համար քրէական յանցանքներ են գործվում. մի եւ նոյն ժամանակ գերեզմանատեղերը ամբողջ դեսեատիններով դատարկ եւ անօգուտ են մնում քան, երեսուն եւ երբեմն աւելի տարիներ։ Զեն մտածում օգուտ քաղել ազատ տեղից, սպասելով, որ ամբողջ տարածութիւնը լցվի դիակներով։

Մի դեսեատին գերեզմանատեղի չուրջը կարելի է տնկել բարդի ծառ, իսկ մէջը ածուներ բանալով նոյնպէս կարելի է ծառեր տնկել երկու կողմերին, որովհետեւ ամբողջ տարածութիւնը մի օրում կամ մի տարում չէ ծածկվում դիաքարերով, ուստի շատ յարմար կը լինի ուղիների մի ծայրից կանոնաւոր շարքով դիակները թաղել։ Այս վարմունքին ոչ մեռելները եւ ոչ եկեղեցու խորհուրդները կը հակառակեն, այլ հանգուցեալներին յուղարկաւորողները միջոց կունենան պաշտպանվելու ամառվայ կիզիչ արեգակի ճառագայթներից եւ ձըմրան ցրտաշունչ հողմերից։ Նոր գերեզմանատեղերը հաստատվում են հոգեւոր վարչութեան գիտութեամբ, եւ գործակալը ժողովրդի ներկայութեամբ որոնում է տեղը։ Դժուար չի լինի միաժամանակ բացատրել ժողովրդին ծառատնկութեան օգուտները եւ եթէ մինչեւ գերեզմանատեղերը դիակներով լցվելը արանքներում եւ շուրջը աճեցնվի մի տասն հազար ծառ՝ դա ապագայում հէնց նոյն համայնքի եկեղեցու համար նիւթական մի հաստատ ապահովութիւն կը դառնայ։

Ժողովրդի անպատրաստութեան մի այլ ապացոյց. բաւական է բարձրանալ լեռներից մէկի գագաթը եւ տեսնել, թէ առուների որպիսի ցանցով է պատած Արարատեան ամբողջ լայնատարած դաշտը։ Եթէ այդ ահագին տարածութեամբ առուների երկու ափերին ծառեր տնկվեն մի-մի կամ երկու-երկու արշին միմեանցից հեռաւորութեամբ, որպիսի ահագին հարստութիւն կը ստանայ նոյն տափարակի վրա տեղաւորված ժողովուրդը, հէնց մի տասնեակ տարուց յետոյ։

Ծառատնկութեան հարցը արդէն արծարծվում է լրագրութեան մէջ եւ նրա զարգացնելն էլ կառավարութեան ցանկութիւնն է, նկատի ունենալով դրա բազմակողմանի օգուտները։ Որովհետեւ մեր դաշտային տեղերում հողը այնքան սակաւ է, որ անհնարին է դրա համար առանձին տեղեր յատկացնել, ուստի ծառատնկութիւնը կարելի է մասամբ իրագործել, տնկելով ծառեր առուների, ճանապարհների երկու կողմերին եւ հին ու նոր գերեզմանների չուրջն ու մէջը։ Բացի առողջապահական օգուտներից թէեւնք նաեւ տնտեսական օգուտը։ Լաւ կը լինի, որ կառավարութիւնը իւրաքանչիւր գիւղից իր սահմանի առուների համար ընտրել տայ ծառեր տնկելու հոգատարներ, իսկ ժողովրդին ստիպմամբ յիշած ազատ տեղերում ծառեր տնկել տայ։ Ծառերը պիտի յատկացնվեն գիւղական համայնքներին, իւրաքանչիւրին իր սահմանում գտնվածները։ Պղտատու ծառերից ամենաօգտակարն է տնկել թթենիներ, որոնք բացառապէս պիտի տնկվեն առուների ափերին եւ գերեզմանատեղերում, ուր համեմատաբար տերեւները ազատ կը մընան փոշու ազդեցութիւնից եւ պիտանի կը լինեն շերամապահութեան համար. հաղորդակցութեան ճանապարհների կողմերին բացառապէս պէտք է տնկել չինութեան փայտեր, որոնցից ամենաշուտ աճողն է մեզանում բարդի կամ զալամա կոչվածը։

Թթենիների զարգանալով՝ բնականաբար կը տարածվի շերամապահութիւնը։ Ոչ ոք չի հերքի, որ ինչպէս ամեն տեղ, նոյնպէս եւ մեզանում գտնվում են վերջին ծայր աղքատներ. աւելացրէք դրանց վրա որբեր եւ այրիներ, որոնք զրկված են նաեւ ճրագալուսի համար կօպէկներ ունենալուց, իսկ հարկ վճարելը սրանց համար մի սարսափելի պատիժ է։ Ցիշեալ թթենիների տերեւները բացառապէս կարելի կը լինէր յատկացնել աղքատներին, անօգնական որբ ու այրիներին, որոնք բազմաթիւ կարիքներից գոնէ մէկը կը լրացնէին շերամապահութեամբ։

Նախկին 50 կօպէկանոց չինութեան փայտը այժմ արժէ մեզանում երկու ռուբլի. հաղորդակցութեան ճանապարհների կողմերին կարելի է հարիւր հազարներով չինութեան փայտեր տնկել. եւ ի նկատի ունենալով, որ փոքր ինչ լաւ խնամատարութեամբ մեզանում բարդին մի տասնեակ տարում այնքան է զարգանում, որ գնահատվում է մինչեւ մէկ ռուբլի, ուրեմն հասկանալի է, որ ճանապարհների երկու կողմերին չինութեան փայտեր աճեցնող համայնքը տնտեսում է 10—15 տարում այնքան ռուբլի, որքան ծառեր է տնկել։

Առուների, ճանապարհների եզերքները եւ գերեզմանատեղերը, ազատ մնալով հողագործի հարստահարող միջոցներից՝ առատ մնունդ են պահպանում, որի չնորհիւ սաստիկ արագութեամբ աճում են ծառերը։ Ապացոյց դրան Իգդիրից Երեւան տանող ճանապարհի վրա նախկին գաւառապետ Փիրումեանի տնկած ծառերը, որոնք մի տասնեակ տարում այնպէս աղող աճեցին, որ այժմ ազատ կարող են գործածվել չինութեան եւ ուրիշ պիտոյքների համար։ Պ. Փիրումեանի տնկած ծառերը աւելի զարգացած կը լինէին, եթէ նրա այստեղից փոխվելուց յետոյ երկար ժամանակ անխնամ չը մնային եւ նրանց կեղեւները ազատ կերակուր չը ծառայէին նախրի էշերին։ Ցաւալին այն է, որ յիշեալ ծառանոցում այժմ կարելի է տեսնել բաւական հաստաբուն ծառերի արմատներ, որոնց բունը կտրատվելով՝ չը գիտենք, յօգուտ համայնքի, յօգուտ աղքատների՞ ծառայեցին, թէ անհետ կորան։

Հեռու է արդեօք այն օրը, որ մենք առիթ ունենանք գրելու «Պատրաստված ժողովուրդ» վերնագրով յօդուածներ։

Յովհաննէս Խօջէյնաթեանց

պաղ։ Սենատի դատաստանական դէպարտամէնտի եւ տեղական դատաստանական հիմնարկութիւնների մէջ պահպանուած են չվերական եւ ֆիննական լեզուները»։

—

Թիֆլիսի առաջին արական գիմնազիայում աւարտեցին իրանց ուսման ընթացքը եւ հաստատութեան վկայական ստացան 43 աշակերտներ, որոնցից ութը հայեր են.—Աղամիրզեան Լեւոն, Ղամազով Գէորգ, Կուսիկեանց Արշակ, Մելիք-Բաբախանեանց Սամսոն, Մատինեանց Վախթանգ, Մարտիրոսեանց Ռուբէն, Մէհրաբեանց Լեւոն, Տէր-Գրիգորեանց Լուդովիգ։ Ոսկէ մէդալի արժանացան երեք հոգի, որոնցից մէկը հայ է, այն է Կուսիկեանց Արշակ։ Երեք հոգի էլ ստացել են արծաթէ մէդալներ։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ֆիննանների վերնիստրութիւնը մշակել է կանոններ այն փոփոխութիւնների մասին, որոնք վերաբերում են արբեցողութեան։ Նոր կանոնների համաձայն, ժողովրդական ժուժկալութեան ընկերութիւնների հոգաբարձուները կարող են արձանագրութիւններ կազմել այն անձանց մասին, որոնք հարբած դրութեան մէջ երեւում են հրապարակական տեղերում։

—

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալը. «Կարդալով «Մշակի» № 103-ի մէջ տպված յայտարարութիւնը, որով մի զարգացած պարոն, պատճառ բռնելով իր հիւանդութիւնը, աղերսում է օգնել իրան՝ ես տեղեկութիւններ հաւաքեցի եւ իմացայ հաստատապէս, որ այդ պարոնը ճիշդ որ հիւանդ է, բայց արժանի չէ օգնութեան։ Նա ունի մօտիկ ազգականներ, որոնք պատրաստ են զետեղել նրան հիւանդանոցում իրանց հաշւով, բայց նա չէ ընդունում այդ առաջարկութիւնը, նախապատիւ համարելով ձեռք մեկնել բարերարներին։ Լրագրով ողորմութիւն խնդրելն էլ, ինչպէս երեւում է, մի փէշակ է դառնում մեր մէջ»։

—

«Пром. Міръ» լրագիրը մատնացոյց է անում ժամանակակից առեւտրա-արդիւնաբերական գործերում տիրող մեռելութեան վրա։ Ոչ մի տեղ կենդանութեան նշոյլներ չեն երեւում։ «Գանգատներ առեւտրի դադարման վրա,—ասում է լրագիրը,—հասնում են Ռուսաստանի ամեն ծայրերից։ Գործերի լիկվիդացիան, մանաւանդ միջին առեւտրի մէջ, շարունակվում է անդադար։ Ցայտնի չէ, թէ մրցողների որքան բազմութիւն պէտք է մեռնի, որպէս զի կենդանի մնացողները երջանիկ կեանք ունենան։ Մեզ մօտ, մրցութեան թոյլ զարգացման պատճառով, այնպէս կարելի էր կարծել, որ մէկ տասնեակ ձեռնարկութիւնների մահը կարող էր փրկել մի ուրիշ տասնեակ ձեռնարկութիւններ։ Եթէ իսկապէս այդպիսի բան չէ նկատվում՝ կը նշանակէ, որ առեւտրի անկման պատճառները զանազան արտաքին կամ պատահական հանգամանքները չեն»։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Յունիսի 1-ից եղանակները սաստիկ տաքացան, եւ մեր բուրժուաները չտապում են փախչել ամարանոցներ եւ մանաւանդ արտասահման»։

—

ԲԵԼԻԿԼԻԶԻՑ մեզ գրում են. «Յունիսի 8-ին, ցերեկվայ 3 ժամին արեւը բոպէապէս չքացաւ, սեւ ամպերը իրար վրա կուտակվեցին եւ ապա սկսեց տեղալ ձուաչափ կարկուտ, որը կայծակի արագութեամբ հողին հաւասարեցրեց այս տարի առատութիւն խոստացող արտերն ու շրջակայ գիւղերի պտղատու այգիները։ Հեղեղին զոհ են գնացել մի քանի ընտանի անասուններ։ Վնասի որքանութիւնը դեռ ճշտ չէ որոշած։ Շարունակ տեղացող անձրեւների պատճառով այս տարի ամարանոց եկողների թիւը աննշան է»։

—

Լոռու վիճակի ՇԱՀԱԼԻ գիւղից մեզ գրում են. «Մայիսի 29-ին, Լոռու մասի պրիստաւ պ. Մէլիքովի առաջարկութեամբ Շահալիում կազմվեց հասարակական ժողով նոր դպրոց բանալու հարցի քննութեան համար։ Ի նկատի ունենալով, որ գիւղերի փոքրութեան եւ նիւթական միջոցների սղութեան պատճառով ամեն գիւղ չէ կարող իր սեփական դպրոցն ունենալ՝ ժողովը բարոյ հաստատեց Զորագիւղ եւ Ղամշկուտ գիւղերն էլ միացնել Շահալիին եւ այս վերջինում բանալ երեքի համար տարրական միդասեան դպրոց ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան ծրագրով։ Հաւաքները յանձն առան եկող գարնանից ձեռնարկել դպրոցի համար սեփական շինութեան եւ վճռեցին յատկացնել ուսուցչին տարեկան 300 բուբլի ռոճիկ, բնակարանով ու վառելափայտով։ Եթէ կարելի եղաւ այս աշնանից ուսուցիչ ունենալ՝ այդ դէպքում հասարակութիւնը դպրոցի համար մասնաւոր բնակարան կը վարձէ»։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, յունիսի 1-ին

Լիլաւա թաղի երկսեռ դպրոցներում, ինչպէս անցեալ տարի, այս տարի եւս քննութիւններ չեղան, որովհետեւ դրանք դպրոցների վարչութեան կողմից միանգամայն վնասակար եւ աւելորդ են ընդունված։ Դասերը շարունակվեցին մինչեւ մայիսի 25-ը, իսկ դրանից յետոյ սկսվեց դպրոցական հանդէսը, որ տեւեց երեք օր. առաջին երկու օրերը աշակերտների եւ աշակերտուհիների համար, իսկ երրորդ օրը—հասարակութեան համար։

Դպրոցների բակը շատ չքեղ էր զարդարված յաղթական կամարներով, կանաչ հիւսակներով, վարդից պատրաստված պսակներով, գորգերով։ Լուսամուտներում եւ սիւների վրա ծածանում էին դրօշակները, իսկ Թաւրեան դպրոցի ճակատին ծաղիկներով գրված էր «լոյս, լոյս եւ լոյս», աջակողմեան պատի վրա «ամուր սեղմիր գիրքը կրծքիդ»։ Բակի լայն, ընդարձակ տեղում բաւական խնամքով եւ ճաշակով պատրաստված էր եւ բեմ մանկական ներկայացման համար։ Այդ օրերում ամբողջ դպրոցը իր փոքրիկներով ժպտում, թռվռում էր. կեանքը եռում էր, մոռացած ամեն հոգս։

Առաջին օրը աշակերտները խաղացին «Ընտիկ ու Զատիկ» մանկական պիէսը, մանկական գրքից փոխադրած—որը մեծ զուարճութիւն պատճառեց ոչ միայն փոքրիկներին, այլ եւ հասարակութեան, որ ներկայ էր խուռը բազմութեամբ։ Ապա աշակերտներն ու աշակերտուհիները կարդացին—արտասանեցին բացի արձակ յօդուածներից, ոտանաւորներից եւ անեկդոտներից, նաեւ ինքնուրոյն ոտանաւորներ եւ ճառեր։ Ուշադրութեան արժանի էր մանաւանդ Ш դասարանի աշակերտ Սահակ Ստեփանեանի ճառը «դպրոցից դէպի կեանք»։ Նա որոշ կերպով շեշտեց դպրոցի եւ կեանքի անմիջական կապը։ Եղան առանձին եւ խմբական խաղեր, զանազան վարժութիւններ եւ հայկական խմբական պարեր, իսկ երգեցիկ խումբը մէջ ընդ մէջ երգում էր քառաձայն եւ երկձայն երգեր։

Երկրորդ օրը կարդացվեցան ինքնուրոյն եւ ոչ ինքնուրոյն ոտանաւորներ։ Եղան երգեր, խաղեր, պարեր, հէքիաթ, անեկդոտ—Ղարադաղի բարբառով, յաղթական դնացքով ներկայացրին տարվայ 12 ամիսը, «Մարտը տալիս է ձնծաղիկ»-ի համաձայն։ Երրորդ դասարանի աշակերտուհի Մարգարիտ Աւագեանը խօսեց դպրոցի աշակերտուհիների մասին, եւ միայն ընդհանուր ակնարկ գցելով՝ անցաւ կանանց խնդրին. խօսում էր վստահ, առանց քաշվելու, ասում էր այն՝ ինչ թոյլ էին տալիս իր ոյժերը, եւ քաջալերում էր իր ընկերուհիներին նոր հոսանք սկսելու։ Հանդէսի վերջում աշակերտներից կազմած խումբը զինուորական վարժութիւններ կատարեց. եղան եւ վարժութիւններ զուգափայտերի վրա, որով վերջացաւ աշակերտական հանդէսը։

Երրորդ օրը, կիրակի, պատարագից յետոյ, եղաւ ակտը, որին ներկայ էր միայն հասարակութիւնը։ Դպրոցների տեսուչ Տիգրան Ռաչմաճեան կարդաց 1899—1900 ուսումնական տարվայ տեղեկագիրը եւ հաշիւը, իսկ հոգաբարձու պ. Յակոբ Մելիք-Սարգսեանը տնտեսական հաշիւը։ Թաւրեան երեքդասեան դպրոցը աւարտեցին եւ ստացան վկայագիր 5 հոգի, իսկ դպրոցը՝ 9 հոգի. դրանց աւարտման վկագրեր չը տրվեց, որովհետեւ, ինչպէս տեսուչը յայտնեց՝ մտադրութիւն կայ աղայոց չորրորդ դասարան բաց անել։ Տեսուչը շեշտեց, որ չը նայած որ դպրոցները նիւթականի կողմից աննախանձելի դրութեան մէջ են գտնվում, բայց դպրոցական վարչութիւնը՝ հասկանալով կրթութեան կարեւորութիւնը՝ յանձն է առել դժուարութիւններ, չարչարանքներ դպրոցական գործը աւելի բարեկարգելու համար։

Լիլաւա-թաղի թատերասիրաց խումբը, որպէս դպրոցական հանդէսի շարունակութիւն, խաղաց «Ղարաբաղի Աստղազէտ» պիէսը, նոյն դպրոցների մանկական գրադարանի օգտին։ Ներկայացումը եղաւ ուրբաթ, շաբաթ եւ կիրակի գիշերները, Լիլաւայի թատերասրահում։ Առաջին օրը միայն բարձր դասարանի աշակերտների ու աշակերտուհիների համար, ի հարկէ, ձրի. երկրորդ օրը—ունեւոր դասակարգի համար մատչելի գներով, իսկ երրորդ օրը—բոլորովին էժան գներով հասարակ դասի համար. առաջին կարգը 5 զռան (1 ր.), վերջինը 10 շահի (10 կոպէկ)։ Զը նայած սիրողների ստեղծած այդքան յարմարութիւններին եւ դիւրութիւններին՝ էլի թատերասրահը դատարկ էր. դատարկ էր, որովհետեւ իւրաքանչիւրին առանձնապէս տժվսակներ չէր ուղարկվել, որին թաւրիզեցիները միանգամայն վարժվել են։ Ե. Ֆրանգեանց

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Matin» լրագրի Լօնդոնի թղթակիցը հետեւեալ կերպով է նկարագրում գործերի դրութիւնը Պէկինում եւ Տեանձինում։ «Պէկինում բոլոր դեսպանները գերիների դրութեան մէջ են իրանց դեսպանատներում, նաւաստիների փոքրաթիւ զօրաբաժինների պաշտպանութեան տակ։ Եւրոպական զանազան պետութիւնների եւ Միացեալ-Նահանգների հպատակները հաւաքվել են այդ ինքնահնար միջնաբերդերում եւ չեն համարձակվում փողոցում երեւալ, վախենալով կատաղի ամբոխի վրէժխնդրութիւնից։ Եթէ չը հաշուենք դեսպանատները, մագազինները եւ մաքսատները՝ բոլորը ինչ որ եւրոպական է Պէկինում, աւերված է, կողոպտված կամ այրված։ Մայրաքաղաքում քարոզանգ են եղած կաթոլիկների եւ բողոքականների բոլոր մատուռները։ Մինչեւ անգամ ֆրանսիական միսսիայի ձեռքով կառուցած կաթոլիկական տաճարը չը խնայվեց եւ բոցերի ճարակ դարձաւ... Եւրոպացիներին ամենամեծ վտանգ սպառնում է Պէկինում։ Տեանձին գրաւող նաւաստիների զօրաբաժինները իսկապէս բաւարար են տեղական եւրոպացիներին պաշտպանելու համար, մանաւանդ որ Տեանձինից մի քանի վերստ հեռաւորութեամբ գտնվող Տակուում կենտրոնացած են 40-ից աւելի եւրոպական նաւեր։ Բոլորովին ուրիշ դրութեան մէջ է գտնվում Պէկինը»։

—«Times» լրագրին Լօրենցո-Մարկեզից հեռագրում են. «Լէուվէն դատաւորը, որը Պրէտորիայից հեռացաւ բրիտանական զինուորական նահանգապետի թոյլտուութեամբ, եկաւ Լօրենցո-Մարկեզ։ Նա էր,—կարծում եմ,—որ պէտք է բերանացի հաւատացնէր Կրիւգէրին, թէ բրիտանական իշխանութիւնները նրան երկրից չեն աքսորի, եթէ անձնատուր կը լինի։ Դժբաղդաբար Կրիւգէր քնած էր այն ժամանակ, երբ Լէուվէն անցնում էր նախագահի գլխաւոր բանակի մօտով, եւ այդ պատճառով նա իր դերը յանձնարարեց Բէյցին։ Վերջինս արհամարհանքով մերժեց այդ միջոցը, ասելով որ Կրիւգէր երբէք չի ընդունի մի այդպիսի առաջարկութիւն։ Կրիւգէրի տրամադրութիւնը ճանաչող մարդիկ կարծում են, որ ընդհակառակը, եթէ այդ բանը յայտնի դառնար Կրիւգէրին՝ նա երեւի կը համաձայնվէր։ Բէյց, ըստ երեւոյթին, ինչպէս եւ Շոէյն՝ պատերազմը շարունակվելու կողմնակից են, եւ նրանք, որոնք ճանաչում են նրան, կասկածում են, թէ նա ծածկել է բրիտանական իշխանութիւնների առաջարկը Կրիւգէրից։

—Անգլիական լրագիրները հաղորդում են, որ Պրէտորիայի համար նշանակված զօրքերի մի մասը Նատալից կուղարկվի Զինաստան։ Լօնդոնում չինական գործերը այժմ երկրորդական նշանակութիւն են տուել տրանսվաալեան պատերազմին, եւ հասարակութիւնը այժմ աւելի լարված հետաքրքրութեամբ է սպասում լուրերի Զինաստանից՝ քան հարաւային Աֆրիկայից։

—«Manchester Guardian» լրագիրը, խօսելով պետութիւնների հավասարման մասին, ասում է. «Միակ պետութիւնը, որ կարող է հաւասար ոյժ հանել Զինաստանում Ռուսաստանի դէմ՝ դա Եապոնիան է, բայց թէ Եապոնիան ինչ ունի ի նկատի—մեզ յայտնի չէ։ Յամենայն դէպս մենք այժմ պիտի համոզվենք, որ մեր զօրքերի Հարաւային Աֆրիկայում լինելը հարկադրում է մեզ, կամայ ակամայ, հաշտվել այն երկրորդական դերի հետ, որ մենք կունենանք չինական գործերը կարգադրելու մէջ»։

—Տակուի պատերազմի մասին ստացվել են առ այժմ հետեւեալ տեղեկութիւնները։ Շաբաթ օրը, կէսօրից յետոյ, օտար նաւատորմիղների հրամանատարները, նկատելով որ Տակուի մարտկոցների մէջ հաւաքվում են չինական մեծ ոյժեր, որ գետի մէջ տորպեդներ են դրվում եւ բոլոր հաղորդակցութիւնները կտրված են՝ ուղարկեցին վերջնագիր, պահանջելով որ զօրքերը յետ քաշվեն եւ սպառնալով, հակառակ դէպքում, քանդել մարտկոցները։ Միւս օրը, գիշերվայ ժամի մէկին, չինական ամրոցներից անսպասելի կերպով ռմբակոծութիւն սկսվեց, որից օտար պետութիւնների նաւերը բաւական վնասվեցան։ Այդ ժամանակ միջազգային նաւատորմը իր կողմից սկսեց մի սոսկալի թնդանօթաձգութիւն չինական մարտկոցների դէմ եւ բաւի բուն նշանակութեամբ աւերակ դարձրեց նրանց։ Ռուսաց զօրքերը, լուրերին նայելով, օգնում էին յարձակման ցաւաքի կողմից. յարձակումը տեւեց մի քանի ժամ եւ այնուհետեւ մարտկոցները գրաւեցին։ Ռուսաց զօրքերը, որոնք չինացիներին սուրիններով յետ մղեցին։ Հարիւրաւոր չինացիներ սպանված են դէպի հիւսիս փախչելիս։ Զօրքերի ամենամեծ մասսան կազմում էին ռուսները, որոնք մինչեւ այժմ Տակուի մօտ են իջեցրել 10 հազար մարդ։ Եապօնական ծովապետը հրաման ստացաւ նոյնպէս 10 հազար զինուոր ափ իջեցնել։

## „ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

13 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Փոխ-ծովապետ Ալէքսէեվի հեռագիրը զինուորական մինիստրին. Պորտ-Արտուրից, յունիսի 6-ից, զնդապետ Անիսիմովի զեկուցումն է ստացված, որից երեւում է, որ զօրաբաժնի դրութիւնը շատ վտանգաւոր է։ Հաղորդակցութիւնն ընդհատված է։ Զինական խմբերը չը կարողացին Տեանձինը եւ մեծ թնդանօթներով ռմբակոծում են մեծ կորուստներ հասցնելով։ Սպանված եւ վիրաւորած են եօթ օֆիցէրներ եւ 150 զինուորներ։ Փամփուշտներ եւ ռումբեր քիչ են մնացել։ Դժուար է անցնել դէպի Տակու, նոյնպէս եւ տանել կանանց, երեխաներին եւ վիրաւորվածներին. երկաթուղին կատարելապէս փչացած է։ Զեկուցումը ստացված է դէպքի բերմունքով։ Գեներալ Օտէսէլ Անիսիմովին ազատելու համար ուղարկեց՝ ինչ որ ձեռքի տակ ունէր։ Այսօր, յունիսի 8-ին, արտիլէրիան տեղաւորելուց յետոյ յոյս ունէր դուրս գալ միւսների հետ, բերդապահ զօրքը թողնելով Տակու։ Դրութեան լրջութիւնը պարտաւորեցնում է ինձ ծայրայեղ միջոցներ ձեռք առնել, չը սպասելով զօրքերին Վլադիվոստոկից եւ անյապաղ ուղարկել այս գիշեր տասերորդ գնդի մէկ բատալիոն»։

ԼՕՆԴՕՆ։ «Terrible» կրէյսերը ժամանեց Տակու։

ԴԱՄՄՇՏԱԴՏ։ Մեծ Իշխանուհի Ելիսավէտա Ֆէօդորովնա ժամանեց Վոլֆսպարտէն։

ՖՐԱՆՑԷՆՍԲԱԴ։ Մեծ Իշխան Սերգի Ալէքսանդրովիչ ճանապարհ ընկաւ այստեղից։

ԲԵՐԼԻՆ։ Զիֆուի գերմանական հիւպատոսը հեռագրում է, որ Սէյմուր գտնվում է 20 կիլոմէտր հեռաւորութեամբ Տեանձինից դեսպանների հետ միասին, նեղված «Մեծ բռունցքից»։ Նրան օգնութեան ուղարկած զօրաբաժինը դուրս եկաւ Տեանձինից յունիսի 11-ին։ Տակուից դուրս եկած զօրաբաժինը մտաւ Տեանձին։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Ինչպէս հեռագրում են Զիֆուից՝ կէմպֆ հաղորդում է, թէ եապօնական զրահակիր նաւի միջոցով տեղեկութիւն ստացաւ միացեալ զօրաբաժնի Տեանձին մտնելու մասին, մի կուրից յետոյ, որի մէջ եւրոպացիների կորուստները ծանր էին։ Զօրաբաժինը ապա օգնութեան եկաւ Սէյմուրին։ Եապօնական աղբիւրից ստացված տեղեկութիւնների համեմատ, Սէյմուր դերի է, իսկ օտար պետութիւնների դեսպանները հեռացան Պէկինից չինական զօրքերի պաշտպանութեան տակ եւ յայտնի չէ, թէ ուր են գտնվում։

ԲԵՐԼԻՆ։ Գերմանական կոլոնիան Հոնկհոնգում հեռագրով խնդրեց կայսրին, ի նկատի ունենալով այժմեան դրութիւնը Զինաստանում, թոյլ տալ առաջարկել իր ծառայութիւնները հոնկհոնգեան անգլիական կառավարութեան։ Կայսրը թոյլ տուեց այդ։

Գերմանական նահանգապետի հեռագիրը հաղորդում է չինական աղբիւրից, որ Սէյմուրի հրամանատարութեան տակ գտնվող զօրաբաժինն եկաւ Պէկին։

ՇԱՆԳՀԱՅ։ Տակուում ափ են իջեցրված 8000 եւրոպական զօրքեր, որոնց թւում 1200 գերմանական։ Հոնկհոնգից Տակու եկած 300 հրացանաձիգները եւ 900 մարդ հնդկական զօրքեր ուղարկված են Տեանձինն ազատելու համար։ Ճիշդ աղբիւրից հաղորդում են, որ բրիտանական կառավարութիւնը խոստացաւ չինական կառավարութեանը ափ չիջեցնել զօրքեր Եանձէ հովտում, բացի այն զօրքերից, որոնց նպատակն է օգնել չինական կառավարութեանը ապստամբութիւնը ճնշելու համար։

ԶԻՖՈՒ։ Ստացված տեղեկութիւնների համեմատ, 3000 չինական զօրքեր Տակուից շտապով եկան Տեանձին՝ ուժեղացնելու չինական եւ «Մեծ բռունցքի» ոյժերը։

ՀՈՆԿՀՈՆԳ։ Զօրքերը Մակաուում զէնքի են կանչված։ Մակաոի նահանգապետը զէնք ուղարկեց պորտուգալացիներին Կանտոնում, ուր փողոցների վրա օտարահպատակների համար թշնամական ոգիներ երեւացին։

ՇԱՆԳՀԱՅ։ Անգլիական «Terrible» կրէյսէրը եկաւ Տակու։ Հաղորդում են, որ 800 մարդուց

բաղկացած հնդկական զօրաբաժնին եւ 200 հրացանաձիգներին աջողվեց յարաբերութիւն հաստատել գերմանական, ամէրիկական եւ ռուսաց զօրքերի հետ, որոնք դրանից երկու օր առաջ, Տեանձինից մօտ 9 մղոն հեռաւորութեան վրա կարված էին չինացիների կողմից։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը Պետերբուրգի հաշով)
տարբերութիւնը 58 րոպէ։

| № 5 գնացքը: | | № 3 գնացքը: | |
|---|---|---|---|
| Բաղուից դուրս է գալիս ցեր. | 4 ժ. 1 ր. | գիշ. | 11 ժ. 29 ր. |
| Թիֆլիս է հասնում առ. | 8 » 53 » | եր. | 5 » 34 » |
| Թիֆլիսից դուրս է գալիս » | 9 » 32 » | եր. | 6 » 34 » |
| Բաթում է հասնում եր. | 9 » 1 » | առ. | 7 » 14 » |

| № 6 գնացքը: | | № 4 գնացքը. | |
|---|---|---|---|
| Բաթումից դուրս է գալիս առ. | 7 ժ. 50 ր. | եր. | 7 ժ. 59 ր |
| Թիֆլիս է հասնում եր. | 7 » 15 » | առ. | 8 » 42 » |
| Թիֆլիսից դուրս է գալիս » | 7 » 18 » | » | 10 » 05 » |
| Բաղու է հասնում ցեր. | 12 » 10 « | » | 5 » 16 » |

արագ գնացք

| | | |
|---|---|---|
| Թիֆլիսից դուրս է գալիս . . . . | ցեր. | 11 ժ. 19 ր. |
| Բաթում է հասնում . . . . . | երեկ. | 9 » 41 » |
| Բաթումից դուրս է գալիս. . . . | գիշ. | 11 » 18 » |
| Թիֆլիս է հասնում . . . . . | առաւ. | 9 » 30 » |

—

| | | |
|---|---|---|
| Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս. | երեկ. | 9 ժ. — |
| Ալէքսանդրօպոլ հասնում է . . . | առ. | 7 » 46 ր. |
| Կարս հասնում է . . . . . | ցեր. | 12 » 56 » |
| Կարսից դուրս է գալիս . . . . | ցեր. | 3 » 29 » |
| Ալէքսանդրօպոլից դուրս է գալիս . | երեկ. | 8 » 35 » |
| Թիֆլիս հասնում է . . . . . | առ. | 7 » 15 » |

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
**Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ**
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Կ. Ի. Գզելիեվ—12½—1½ ժ. ականջի, կոկորդի և քթի հ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Վ. Գ. Ֆէրեբելի—6—8 ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ց. Առվանիսեանի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Ց. ՍՕԼՕՎԵԱՆԻ
«ԿՈՏՐՎԱԾ ՍԻՐՏ», վէպ, գինը . . 40 կօպ։
«ՂՕՆԱՂԼՈՒՂՍ ՄՆԱՑ» վոդեվիլ, գ. 20 »
Դիմել՝ Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցին, կամ՝ Астрахань, учителю Акиму Соловьянцу. 6—8

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ
մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց
ԶՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մունները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բաղում. նաև Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։
80—100

ԿԻՐԱԿԻ, ՅՈՒՆԻՍԻ 18-ԻՆ,
Մուշտայիդ այգում
ԶՐԻ ԵՒ ԷՖԷՌՆԵՐԻՆ ՃՈՇԵՐԱՆԻ ՕԳՏԻՆ
կը կայանայ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ
բազարով, երաժշտութեամբ եւ ֆէյէրվէրկով։
Երեկոյեան այդին լուսաւորված կը լինի։
Զբօսանքի սկիզբն է 4 ժամին։
Այդին մտնելու համար վճարում են 20 կօպէկ։
1—3

## ՀՐԱՒԷՐ

Ամսիս 18-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 10-ին, ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցում լինելու է նոր երէցփոխի ընտրութիւն, ուստի պատիւ ունիմ սրանով հրաւիրել ծխերին ներկայ լինել եկեղեցումն՝ ընտրութեանը. ժամանակելու. ի 11-ն յունիսի 1900 ամի ի Թիֆլիս։
Գործակալ բ. մ. Թիֆլիսի՝
1—2 Գրիգոր քահ. Մանդակունի

## ԴՊՐՈՑ
տիկ. Կատ. Լիսիցեանցի
երկու սեռի մանուկների համար։ Միատեղ պարապմունք իր հարազատ երեխաների հետ։ Ընդունելութիւնը՝ սահմանափակված։ Սեպտեմբերից բացվում է նաեւ պանսիօն։ Դիմել—օգոստոսի 26-ից—Բեհբութեան փողոց (նախկին Սադովայա), սեփ. տ. № 29)։ (եչ.) 3—25

Լոյս տեսաւ Մոսկվայում
ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ
## ◆ՀԻՆ ՑԱՒ◆
(Հրապարակախօսական խոհեր)
ԳԻՆԸ 30 Կ.
Վաճառվում է Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցում եւ «Մշակի» խմբագրատանը Հրատարակչական ընկերութեան գրասենեակում, Գ. Գալստեանի մօտ։ 3—5

## ՄԻ ԱՍՏԻՃԱՆԱՒՈՐ
որ լաւ գիտէ տեղական լեզուներ, ցանկանում է գտնել կառավարչի պաշտօն՝ կալուածքների, գործարանների, զավոդների եւ տնտեսական մասի Թիֆլիս քաղաքի մէջ կամ նրա շրջակայքում. հասաձայն է եւ գնալ ուրիշ երկիրներ։ Ի ապահովութիւն իր ազնիւ եւ մաքուր գործունէութեան, ներկայացնում է, իբրեւ գրաւական, փողով, դրամատոմսով եւ անշարժ կալուածքով, հինգ հազար բուբլու արժողութեամբ։ Հասցէն է՝ Քարվանսարա Զիթախեանի, Սիօնի փողոց, Խ. Մար. Մ—եանց։
(չ. ե. հ. չ.) 3—4

ՀՈԳԵՒՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԻՑ Թիֆլիսի էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցին վերանորոգելու թոյլտուութիւնը ստացած լինելով, սրանով դիմում եմ պ.պ. ծխականներին եւ բարեպաշտ անձանց, որ իրանց նուէրները ուղարկեն ինձ նոյն եկեղեցու հասցէով։
(ե. հ. չ.) Երէցփոխ՝ Գրիգոր Նաշխունեանց

Շուտով լոյս կը տեսնեն՝
ՄԻՇԱ ԿՕՐԴՕՆ
վոդեվիլ
ԱՌԻՒԾ ԱՍԼԱՆ եւ ԻԳԻԹ ԽՈՒՐՇՈՒ
վէպ I հատ.
Արդիւնքի ⅔ մասը յօգուտ չքաւոր ուսանողների։
Հեղինակ Բ. Աւագեանց
(հ.) 2—3

## ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ
«ՄԻՋՈՐԴ»
(Посредникъ)
Դ. Ի. ԵԱԿԻՄՕՎԻՉԻ
Պուշկինեան պասաժ, Թամամշեվի քարավանսարայի հանդէպ։
Հրաւիրում է պ.պ. տանտէրերին հաղորդել մանրամասն հասցէ ազատ բնակարանների (դրա համար վերցնվում է 20 կօպ.), որ շատ դիւրութիւն կը պատճառէ թէ տանտէրերին եւ թէ բնակարան վարձողներին։ Այդ նպատակով պատրաստված է մանրամասն ցուցակ։ Գրասենեակում կայ ազատ բնակարանների մեծ ցուցակ։ Ցանկացողները թող դիմեն գրասենեակ։
№ 1. 0—41

Պարիզի համաշխարհային ցուցահանդէսին եկող ռուսահայ եղբայրների իմ պատրաստակամ ծառայութիւնս եմ առաջարկում նրանց առաջնորդելու։ Լաւ ծանօթ եմ թէ Պարիզի եւ թէ ցուցահանդէսիբոլորհետաքրքիր եւ ուշադրութեան արժանի տեղերին։
Հասցէս՝ M. Aktarian. 6, Rue Laromiguièer Paris.

1897 թ-ի մարտի 27-ին Պետական Խորհրդի Բարձրագոյն հաստատված կարծիքի հիման վրա, Թիֆլիսի քաղաքի անշարժ կայքերից, ծխահարկի փոխանակ, 1898 թ-ից պետական հարկ բաշխող յատուկ յանձնաժողովը յայտնում է ի գիտութիւն հիմնարկութիւնների եւ վարչութիւնների պ.պ. տանտէրերին, որոնց գոյքերը ենթակայ են հարկի. 1) որ հարկի բաշխումը եւ դրա առնելու համար նշանակված ծախսերի գումարները այս 1900 թ-ի համար, առաջինը 120,714 ր. չափով, իսկ երկրորդը 3,200 ր., աւարտված է եւ հանդէս է դրված տեսնել ցանկացողների համար Թիֆլիսի Կազիօննայա պալատի շինութեան մէջ գտնվող Ցանձնաժողովի դիւանատան մէջ, որտեղ վճարողները հէնց կարող են յանձնաժողովի նախագահից ստանալ բոլոր անհրաժեշտ բացատրութիւնները. 2) որ Ցանձնաժողովի կատարած բաշխման դէմ հարկ վճարողները, մէկ ամիս ժամանակամիջոցում, հաշուելով այդ սոյն յայտարարութեան տպվելու օրից, կարող են առարկութիւններ ներկայացնել Առանձին Ցանձնաժողովին, իսկ վերջինի վճռով գժգոհները վերոյիշեալ առարկութիւնների վերաբերմամբ, կարող են հէնց Առանձին Ցանձնաժողովի միջոցով գանգատներ ներկայացնել նահանգական վարչութեանը, այնպէս որ ոչ տրվող առարկութիւնները, ոչ էլ գանգատները վճարի չեն ենթարկվում։ Տեղեկութիւններ ցանկացող անձինք պէտք է նախապէս ձեռք բերեն այն N N, որոնց տակ գրված են նրանց գոյքերը քաղաքային ցուցակագրութեան համեմատ։ 1—1

## ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԲԻՒՐՕ
բացված է սոյն 1900 թ-ի մայիսի 3-ին, Օլգինսկայա փողոցի վրա, եղբայրներ Ենիկոլոփովների տան մէջ, Զէմմէլի դեղատան դիմաց.
ԲԻՒՐՕՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է—նախագծերի եւ նախահաշիւների կազմելը. բիւրօն յանձն է առնում հսկել եւ շինարարական աշխատանքներ կատարել տնտեսական ձեւով քաղաքացիական շինութիւնների եւ գործարանների համար, ճանապարհներ շինել (խճուղային եւ հասարակ) ռէլսային ճանապարհներ գործատներում, ժամանակաւոր կամուրջներ եւ այլն։ Առաջարկում է զանազան մասնագիտութեան վարպետներ։ Այդտեղ էլ ծախվում են. 1) Աղիս ռուսական եւ ուրիշ տեսակի Ա. Ի. Սուրէնեանի գործատնից, հօֆմանեան վառարաններով.—2) պարկէտ ինժենէր Ց. Ս. Միրիմանովի եւ ընկ. գործարանից.—3) ՔուԹայիսի քար զանազան գոյների եւ այլ շինարարական նիւթեր։
Բիւրօն բաց է առաւօտեան 8 ժամից մինչեւ երեկոյեան 8 ժամը։ 1—1

## ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
վաճառվում են հետեւեալ գրքերը.
Աղայեանց Ղ., Բանաստեղծութիւններ, Թիֆ. գինը 1 ր. 50 կ. փոխարէն 75 կօպ.։
Բարխուդարեանց Ց., Մանկական խաղեր, Թիֆ. գ. 50 կ.։
Մուրացան, Հայ բողոքականի ընտանիքը, Թիֆ. գ. 40 կ.։
Շիրվանզադէ, Արսէն Դիմաքսեան. վէպ, Թիֆ. գ. 1 ր. 50 կ.։
» Քաոս, վէպ, Բաղու, գ. 1 ր. 50 կ.։
» Զուր յոյսեր, վէպ. Թիֆ. գ. 1 ր.։
» Կրակ, Բաղու, գ. 30 կ.։
Ուիդա, Ցեց, վէպ, Թիֆ. գ. 80 կ.։
Փայտաչէն խրճթից մինչեւ սպիտակ տունը, Թիֆ. գ. 60 կ.։
Օնէ ժ., Դոկտոր Ռամօ, գոյութեան կռիւներ, գ. 80 կ. փոխարէն՝ 60 կ.։
Դիմել՝ въ Тифлисъ, Центральная Книжная торговля. (4) 1—2

## „ՎԻԼՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ"
ԱՂԷՔՍԱՆԴՐ ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆԻ
Գօլով. պրոսպ., առաջին գիմնազիայի հանդէպ, տ. Քաշուէթի ս. Գէորգ եկեղեցու
Ստացել ենք ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ տղամարդկանց թէ եւրոպական և թէ ֆօրմէնների—աշակերտական ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ։ Զիջումներ ենք անում գիմնազիաների և միջնակարգ դպրոցների ՇՐՋԱՆԱՒԱՐՏ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ, նշանակված գներից 10%։
Ընդունում ենք ամեն տեսակ պատուէրներ
տղամարդկանց և ֆօրմէնների, զանազան դպրոցների և նոյնպէս առևտրական ուսումնարանի (коммерческое училище) աշակերտների համար։ 8—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
## Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ։
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլիս։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 21 յունիսի (4 յուլիսի) ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը, Նաւապետ ԲԼԱՆԿԻ։ եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ուսանելու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօվն, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խոջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մութաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՕՍԻՑՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (ե. հ. չ.) 15—20



## Լ. ԽԱՆ-ԱՂԵԱՆՑԻ
աւտօ էլէվատորը գիշեր-ցերեկ ԻՆՔՆ ԻՐԱՆ ջուր է բարձրացնում ցածր տեղերից վերեւ։
Դիմել՝ Л. Ханъ-Агову, Тифлисъ, Великокняжеская ул., 37.

## Լ. ԽԱՆ-ԱՂԵԱՆՑԻ
Գիւղատնտեսական մեքենաներ 250 նկարով. վաճառականների մօտ 50 կօպէկ։ 20—30

Дозволено цензурою, Тифлисъ, 14 Іюня 1900 г. Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.